

ԵԼԵՆԱ ԷԹԱՐՅԱՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՎԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՎՈՒՖԳԱՆԳ ՀԻԼԲԻԳԻ «ԵՍ» ՎԵՊՈՒՄ

Վոլֆգանգ Հիլբիգն արդի գերմանական գրականության նշանակալից դեմքերից է: Նրա պոետական լեզվի ուժի առջև խոնարհվում էին ոչ միայն նախկին ԳԴՀ-ի պոետները, այլ նաև արևմտագերմանացի հեղինակներն ու քննադատները, որոնք գովաբանում էին նրա պատմվածքները, իսկ սկսած «Ես»¹ վեպից նրա համար Բյուխների մրցանակ էին գովազդում: Հիլբիգի քնարերգության և արձակի նախատիպերը Կաֆկան, Ֆելանը և Էնցենսբերգերն են: Այլանդակի գեղագիտության համար Հիլբիգի ստեղծագործությանն էական մղումներ էին հաղորդել ֆրանսիական սիմվոլիզմը, կոլաժի հնարքը, նրա գործերում նկատելի է նաև սուռեալիստների ազդեցությունը: Հիլբիգի արձակը ներթափանցված է նաև Ջոյսի, Բեքետի, Դերիդասի գործերից մեջբերումներով, ինչպես նաև վերջիններիս պատմողական ձևերով: Այն, ինչը Հիլբիգին ԳԴՀ-ի համակարգի պայմաններում այդքան ինքնատիպ և ժամանակակից էր դարձրել, եվրոպական, նախևառաջ, դասական մոդերնիզմի տեքստերից փոխառված բազմիմաստությունն էր, որը սկզբից էլ բացառում էր նեղ սահմանափակումը միայն քաղաքական, հոգեբանական, սոցիալ-մշակութային կամ գեղագիտական ընթերցվածքներով:

Դպրոցն ավարտելուց և ճախարակագործի մասնագիտությունը ձեռք բերելուց հետո Հիլբիգը, բանվոր լինելով հանդերձ, շուտ էր սկսել գրել: Ոչ-որ չէր կռահում նրա երկակի գոյի մասին, ինչն ավելի էր սրում նրա ներքին երկփեղկվածությունը: Նա այսպես էր գրում իր մասին. «Ես ԳԴՀ-ի արդյունաբերության ոլորտի սովորական բանվոր էի, որը լավ էր լեզու գտնում իր աշխատակիցների հետ: Իմ աշխատակիցները չգիտեին, որ ես գրում եմ»²: Հսկող պետության իրականությանը Հիլբիգին հաջողվում է հակադարձել սեփական գրական աշխարհի շնորհիվ. սուբյեկտիվ «բացակայության» միջոցով նա գիտակցաբար ազատագրվում է բանվորական գոյից³:

¹ Hilbig, W.: *Ich. Roman*. Frankfurt a. M. 1993

² Hilbig, W.: *Wenn ich gelitten habe, dann ebenso wie die anderen. Gespräch*. In: „Freitag“, 31.05.1991

³ Հմտ. Cramer, S.: *Kein Ort. Nirgends. Ein Ort. Irgendwo. Wolfgang Hilbig versus Christa Wolf*. In: „Wolfgang Hilbig“. „Text + Kritik“ 123, S. 85; und Erk Grimm: „Im Abraum der Städte“, ebd. S. 71.

Իր «ես»-ի հետ համաձայնության գալու փորձը ներթափանցում է Զիլբիգի համադրյալ բոլոր ստեղծագործությունները: Նրա բոլոր գործերը կապակցված են մի կենտրոնական կերպարով, մասնավորապես հիմնականում «ես» անվանումը կրող գրողի կերպարով: «Ես»-ը երբեմն հանդես է գալիս նաև «նա» կամ «Ց»-ն անունների տակ: Գրող Զիլբիգը մշտապես պատկերների փնտրտուքի մեջ է. նա կապակցում է ածխահանքերի տեսարանները, ԳՂԴ-ի վերգետնյա մշակման պատկերները⁴ գրական պատկերների հետ: Նրա ինքնօրինակ նվաճումն իր կենսագրական իրադրությունը բյուրգերական և նախաբյուրգերական մոդեռնի հետ կապակցման մեջ էր: Իր սակավաթիվ հարցազրույցներից մեկում նա նշում է, որ լեզուն իր համար որևէ քմահաճ ինքնանպատակ չէ, այլ միայն ստիպողական փնտրտուք: «Ինձ համար միշտ պարզ էր», ասում է նա, «որ հեղինակն իր մեջ կրում է այն ամենը, ինչ պահանջվում է գրականության համար: Անհրաժեշտ է: Դա է միայն. ազատագրել, ճանաչել և խորհրդածող ուղղու վրա դնել: Այն, ինչ չի վերածվում լեզվի, իրականում գոյություն չունի: /.../ Իմ լեզուն է ինձ ձևավորել»⁵: Զիլբիգի երկերի «ժամանակակից» ես-ը երկու գոյերի միջև երկփեղկվածության ծնունդ է: Սակայն առանց ԳՂԴ-ի նրա մոդեռնիզմը հնարավոր չէր լինի: Հեղինակի գործերն ընդհանուր առմամբ զերծ են դրամատիկական գործողությունից: Դրանցում նաև բացակայում է ժամանակագրությունը: Գործողությունը տատանվում է մի քանի ժամանակային մակարդակների միջև՝ նկարագրելով գիտակցության կորագիծը: Նրա տեքստերը մի մեծ, անվերջ տեքստի բեկորներ են: Դրանցում, պարզապես, *բեմադրվում է և ձևացվում է ես-ը*: Այլ բառերով ասած, նրա երկերը փորձաքնն են, ուր հեղինակը խաղում է ինքնության ենթադրությունների հետ՝ նախապես իմանալով, որ դրանք կյանքում աներևակայելի են:

Այս հոգվածը միտված է քննել, թե որքանով է Վ. Զիլբիգի 1989 թ. հետո լույս տեսած «Ես» վեպը արձագանքում Գերմանիայի միավորումից հետո բացահայտված իշխանության և գրականության հարաբերակցության խնդրին⁶:

⁴ Զիլբիգի ծննդավայրը Լայպցիգի շրջակայքում գտնվող Մոյզելվից անվանումով մոյալ արդյունաբերական ածխաշրջանն էր: Այս ամայացած բնապատկերից որպես հակակշիռ ծնվում էին նրա վաղ, էքսպրեսիվ գրական տեսիլները:

⁵ Zimmermann, H.: *Sprache war für mich zwingende Suchbewegung. Ein Gespräch mit dem ehemaligen Schriftsteller Wolfgang Hilbig*. In „Frankfurter Rundschau“, 20.6.1990

⁶ 1989 թ. հեղաշրջման առաջին ամիսներին վերացվեցին նաև մինչ այդ իշխանության կողմից պաշտպանված արգելքները: Սա առաջին հերթին վերաբերում էր 1990-ի հունվարից որոշ չափով մատչելի դարձած պետական ամվտանգության նախարարության արխիվներին, որոնց մեղակցումը գերազանցեց բոլոր սպասումները: Համաձայն ակտերի՝ ԳՂԴ-ի 16 միլիոնանոց բնակիչներից մոտ 100 000-ը՝ իբրև հաստիքային և 300 000-ը՝ իբրև արտահաստիքային աշխատակից, ներքաշված էին լրտեսության գործունեության մեջ: Հասարակությանն էլ ավելի էր ցնցում այն փաստը, թե տիրապետող ռեժիմը որքան քննախույզ է հետևել արտոնյալ գրողներին: Սպաշուկից էր նաև գրողների լրտեսական գործունեության մեջ ներքաշվածության փաստը: Պետական անվտանգ-

«ես» վեպն հեղինակ Յիլբիգի երևակայական ինքնակենսագրականն է: Թեև գրողը անդրադառնում է պետական անվտանգության թեմային, սակայն ոչ նյութի տեսանկյունից: Նա ավելի շուտ *փոխադրում է սեփական փորձառությունը մտածածին ես-ի վրա*, ընդ որում նա մատնանշում է Կանետիի հետևյալ ասույթը. «Գոյություն չունի իրադարձությունների հանդեպ ավելի մեծ մտերմություն կամ դրանց հանդեպ ավելի խորը հարաբերություն, քան դրանց համար մեղավորություն կրելը»⁷: Վեպի մտահղացումը կապված է գրողի կյանքում տեղի ունեցած մի կոնկրետ իրադարձության հետ. 1978թ. պետական անվտանգության ծառայությունը Յիլբիգին հավաքագրման փորձ էր արել: Չնայած բոլոր սպառնալիքների, նա հրաժարվել էր այդ առաջարկից և այնուհետև ազատ արձակվել: Սակայն նրա համար հարցական էր մնացել այն, թե ինչու էր պետական անվտանգությունը հենց իրեն առաջարկ արել: Ուստի այս իրադրությունը մղել էր Յիլբիգին հետևյալ գաղափարի. «Երբեք որպես գրող ապրելու հեռանկարները ինձ անիրականալի էին թվում, և դա մի իրավիճակ էր, որը ես մեծ դժվարությամբ էի տանում: /.../ Դետևաբար, մինչ հետևյալ մտքի ընդունումն ինձ ընդամենը մի փոքր քայլ էր մնում. եթե ես միայն որպես լրտես կարող եմ մուտք գործել գրական ասպարեզ, ապա ես կդառնամ այն...»:

«ես» վեպի գլխավոր հերոսը մասնագիտությամբ հնոցապան է: Նա միաժամանակ մարմնավորում է գրողի և լրտեսի դերերը: Մ. Վ. - ն գրում է տանը՝ մայրիկի խոհանոցում: Նրա միջավայրը կազմում են զարեջրատների մշտական այցելու Սինդին, չեկերի կեղծող Դարրի Ֆալթեն, ինչպես նաև պետական անվտանգության ավագ լեյտենանտ Ֆոյերբախը: Մ. Վ. - ն՝ վերջինից խույս տալու նպատակով իր ժամանակի մեծ մասը բառացիորեն գետնատակում է անցկացնում, այսինքն՝ Բեռլինի Նորմանի փողոցի վրա գտնվող պետական անվտանգության նախարարության լաբիրինթոսային նկուղի միջանցքներում: Սրանում իր արտահայտությունն էր գտել Յիլբիգի երկերին բնորոշ «ներքևից գցած դիտանկյունը»: Կամբերտին հանձնարարված էր իրականացնել մի «օպերատիվ գործընթաց». նա պետք է լրտեսեր «Ռիդեր» անվանումով «Պրենցլաուեր բերգ»-ի հավաքատեղիից⁸ մի գրողի, որը Սամուել Բեքետի ոճով ավանգարդիստական տեքստեր էր գրում: Այս վեպում առկա է Յիլբիգի ողջ գրական աշխարհը. մայրիկի հետ միացյալ կյանքը Մոյզելվիցում, գորշ ածուխի շահագործումը, հնոցապանի աշխարհը կաթսայանոցում: Սակայն այն, ինչ մինչ այդ պատկերվել էր հանգամանքների զոհի հեռանկարից, այժմ պատկերվում է

գլխի թեման այսուհետև տարածվելու էր առանձին գրողների հետ հաշվեհարդարների և նրանց հասարակական դատերի վրա:

⁷ Hilbig, W.: *Abriß der Kritik*. Frankfurter Poetikvorlesung, Frankfurt/M. 1995. S. 85.

⁸ «Պրենցլաուերի հավաքատեղին» /Prenzlauer Berg-Szene/ պաշտոնական գրականության քաղաքականության «այլընտրանք» էր, մերթ սահմանված որպես «ընդդիմություն», մերթ՝ որպես նորագույն գրականության «հետժամանակակից» տարբերակ:

պետական անվտանգության լրտեսի դիտանկյունից: Վեպի գլխավոր հերոսի կյանքում անծնական ուրորտը բացակայում է և միակ մխիթարությունը նրա համար ալկոհոլն է:

Վերնագրի չակերտները վերստին մատնանշում են ես-ի կրկնապատկումը, երկփեղկվածությունը, օտարացումը և ձևացումը /Simulation/, և ընդեր-ցողը կրկին հայտնվում է այնպիսի մի աշխարհում, ուր այլևս ոչինչ հաստատուն չէ, այդ թվում ես-ը: Այստեղ ամեն ինչ՝ ես-ը և աշխարհը բեմադրումներ են, կառույցներ, իշխանության, մասնավորապես պետական անվտանգության «ֆիրմայի» հորինվածքներ: Իշխանությունը վեպում մարմնավորում է այն ապարատը, որը բնորոշում է մարդկանց մտածելակերպն ու պահելակերպը: Այստեղ գործում է հեգեյան բանաձևը. ամեն իրականը տրամաբանական է, և տրամաբանականը՝ իրական: Վեպում Զ-ի կողմից բազմիցս օգտագործված «ձևացում» հասկացությունը տարածվում է նաև սոցիալիստական պետության վրա, որը հանդես է գալիս որպես զուտ երևակայական, իսկ վեպի գլխավոր կերպարն՝ որպես դրա զոհը. «Ինչ ձևացում է սակայն այս իրականությունը» /56/, ասվում է տեքստում: Մեկ այլ տեղում պետական անվտանգության սպան նախագգուշացնում է. «Մեր հանդեպ Դուք պետք է սակայն հաճախ այնպես վարվեք, կարծես իրականում գոյություն չունեցող իրերն իրական լինեն» /101/: Ինչպես բացահայտվում է վեպի վերջում, յուրաքանչյուր ոք միաժամանակ «ֆիրմայի» աշխատակից է և մեղադրյալ, հանցագործ է և զոհ, ընդ որում, «որպես միակ պիտանին այստեղ հանդես է գալիս միայն լրտեսը...» /372/:

ԳՂԴ-ի փլուզմանը հաջորդած պետական անվտանգության գործունեության մերկացումից հետո բացահայտ դարձան ես-ի և հասարակության, մասնավորապես Դիլբիգի գործերում ոչ ըմբռնելի ես-ի և ԳՂԴ-ի գաղտնի իրականության միջև ապշեցուցիչ զուգահեռները. Պետական անվտանգության ծառայության ակտերում իրականությունը վերածված էր երևակայությանը, իսկ «երևակայության բացարձակ իշխանությունը» ԳՂԴ-ի գաղտնի ծառայության ներքո վերածվում էր անսպասելի իրականությանը: «Փոխադրումը» վեպում հանդես բերված պոեզիայի և գաղտնի ծառայության միջև կապը «ես» վեպում իր տրամաբանական ավարտին է հասնում: Ինչպես նշում է Դիլբիգը, ամենագո բյուրոկրատիան սեփական դինամիկա էր հանդես բերել և «մարդու նկարագրի այնպիսի չափանիշներ էր գարգացրել, որոնք ես առաջնահերթ գրական նախագծեր էի համարում»⁹:

Յան Ֆակտորի վեպի վրա գցած հայացքը աչքի է ընկնում ընդհանրական բնույթով: Նրա կարծիքով «ես» վեպը երկ է «միայնության, սառը քաղաքային աշխարհում լքված լինելու մասին՝ գրված մեկի կողմից, որն իրագեկ էր

⁹ Hilbig, W.: Eine Übertragung, S. 155.

արմատահանմանն ու մեկուսացմանը»¹⁰։ Ըստ Ֆակտորի, վեպը ներթափանցված է ընտանիքի, ապահովության, բացակա հոր, հարաբերությունների մեջ հետևողականության ձգտումներով։ Այս առումով նա ընթերցողի ուշադրությունը դարձնում է ի դեմս Ֆոյերբախի և Կամբերտի մարմնավորված հրամանատար սպայի և արտահաստիքային աշխատակցի հարաբերությունների վրա, քանի որ առաջինիս առկայությունը մշտնապես տեսական ներկայությունը։ Այլ բառերով ասած՝ ի դեմս առաջատար սպայի ձեռք էր բերվում երաշխիք ժամանակակից հասարակությունում մշտապես սպառնացող միայնության դեմ։ Այս իմաստով նա եզրակացնում է, որ վեպը գրվել էր առաջնորդված լինելու ցանկությունից դրդված /ընդ որում, նա առաջնահերթ ի նկատի չունեի պետական անվտանգությունը/։ Ուստի վերջինս վեպում հանդես է գալիս *երևակայության համար բարերար հող հանդիսացող ժամանակակից կուլիսների* դերում։

Ամփոփելով վերոնշյալը, կարող ենք եզրակացնել, որ թեև զարմանալի, սակայն Հիլբիգի համար հետևողական է այն, որ Գերմանիայի միավորումից հետո լույս տեսած երկում գործողության առումով որևէ փոփոխություններ աչքի չեն ընկնում։ Չնայած, որ «Ես» վեպը լույս էր ընծայել պետական անվտանգության հետ կապված թեժ բանավեճերի ժամանակաշրջանում, դրանց արձարծումը, մասնավորապես «բարոյականության» հարցը գրողի ուշադրության կենտրոնում չէ։ *Պետական անվտանգությանը Հիլբիգն առաջնահերթ անդրադառնում է որպես գրական սուբյեկտի*։ Նրա ուշադրությունը բևեռվում է իրականության և մտածածնի միջև փոխհարաբերականության խնդրի վրա։

Վոլֆգանգ Հիլբիգի «Ես» վեպը, այսպիսով, հեղաշրջման տարիներին թերթոններն ողողող թեմայի լայնածավալ և յուրօրինակ մշակման փորձ է։

¹⁰ Faktor, J.: Hilbigs 'Ich'. Das Rätsel des Buches blieb von der Kritik unberührt. In: „Wolfgang Hilbig“ Text + Kritik 123 /1994/, S. 77.